



«ԹՈՂ ՏՈՒՔ ՄԱՆԻ ՏՆՈՅԸ ՈՐ ԻՆՍԻ ԳԱՆ.» ԴՈՒԿ. ԺԸ. 16.


ՀԱՏՈՐ ԻԵ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՆՈՅՆՄԲԵՐ 1, 1896

ԹԻԻ 11

ՄԲ. ՃԱՅՂԻ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՆ

Անցեալ տարի երբ Լոնտոնի մէջ կը գտնուէինք, Ամբրիկացի քսան աղոց խումբի մը հանդիպեցանք որոնք երբեմն շոգեկառքով երբեմն հեծանիւով կը ճամբորդէին Մեծին Բրիտանիոյ մէջ. երբ կը խօսէինք մեր այցելած մայր եկեղեցիներուն և անոնց մէկ քանինն պատահաններուն գեղեցիկ գոյն ունեցող ապակիներուն վրայ, աղոց մէն մէկն ըսաւ, « Կարծեմ մեր տեսած պատահաններուն ամենէն գեղեցիկներն էին Սբ. Ճայլղի մայր եկեղեցիներն էրն էտիմպուրկի մէջ:» Թերևս ամէնն ալ այդպէս պիտի չըսեն, բայց Սբ. Ճայլղի ներսի կողմը որ վերջերս նորոգուած է, իրօք շատ գեղեցիկ է: Սկզբիտա Երիցականութեան բնագաւառն է. և երեք գլխաւոր ճիւղերը, որոնց կը բաժնուի Սկզբիտոյ Երիցականութիւնը, 123 եկեղեցիներ ունին էտիմպուրկի և անոր նաւահանգիստն եղող Լիթհի մէջ: Այդ եկեղեցիներուն մէջ ամենէն նշանաւորն է Սբ. Ճայլղի մայր եկեղեցին ուր ճոն Նոքս կը քարոզէր ժամանակաւ: Անոր հիմակուան քարոզիչն է Տր. Լիզ հանրածանօթ և ազդեցիկ անձ մը: Ամէն Կիրակի երկու կանոնաւոր պաշտամունքներէն զատ զինուորաց յատուկ պաշտամունք մըն ալ կայ, որուն ներկայ կը գտնուին քաղաքին պահապան զօրքերը: Սբ. Ճայլղի պատմութեան մէջ յաճախ յիշուած գէպքերէն մին է 1637 ին պատահածը, երբ կղերականները ջանացին աղօթադիրքը մշտցընել անգիր աղօթքներու տեղ: Ժողովրդին կամքին հակառակ բան մըն էր այս, և ճէննի Կէտտէզ անուն կինը աթոռ մը նետեց գահերէցին վրայ, և ելած աղմուկին և ժխտին պատճառաւ պաշտամունքին վերջ տրուեցաւ:



«ՄԵՆԻԿ, ԻՆՍԻ ԿԸ ՆԵՐՇՄ»

Փողոցի տղայ մը ծանր կառքի մը բաւորուած տղան մերձակայ հիւանները մնաց, չտեսնելով կառքը քաշող գանոցը տարուեցաւ, և հասկցուեցաւ ձիերուն գալը: Ուրիշ տղայ մը, որ աւոր վտանգաւոր կերպով քնատուած նոր հետ կուր ըրած էր, մէկգի վաէր. Տղուն քանի մը օրեր հիւանդանոց

մնալէն ետքը , փոքրիկ տղայ մը , անոր պէս ցնցոտիներով և բարեկամէ զուրի եկաւ և անոր վրայով հարցուց , և նա ընծի մը յանձնեց իր փրատորուած բարեկամին տրուելու համար : Այցելու տղան որ երկչոտ բնութիւն ունէր և շուարած էր , չպատասխանեց իրեն ուղղուած հարցումներուն : Յետոյ շատ չանցած նորէն եկաւ . այս անգամ խընձոր մը բերած էր իր բարեկամին համար : Անկէ ետքը գրեթէ ամէն օր կ'երևնար հիւանդանոցին մէջ , ձեռքը պղտիկ նուէրով մը :

Օր մը հիւանդապահն ըսաւ փոքրիկ այցելուն թէ իր բարեկամը չկրնար աղէկնալ : Տղան այցելուներու յատկացած սենեակին մէջ քիչ մը տնտնայ , յետոյ վարանելով մը հարցուց թէ արդեօք կարելի չէ՞ տեսնել Օննիկը : Առաջ հրաւիրուած էր տեսնել , բայց ինք մերժած էր :

Փոքրիկ հիւանդը պառկած էր , շատ տոգոյն և տկարացած : Աչքերը բացաւ զարմանքով երբ ըսուեցաւ թէ մէկը իրեն այցելութեան եկած էր : Ինք չմտած՝ երկու փոքրիկ բազուկներ փաթթուեցան իր պարանոցին , և ազտտ երես մը ծուեցաւ իր երեսին վրայ , հեկեկալով , «Օննիկ , ինծի կը ներևս : Մենք կուտեցանք իրարու հետ , և գիտեմ որ ֆլասեցի քեզի , կը ցաւիմ : Կ'ըսեմ ինծի , Օննիկ , թէ ինծի դէմ բան մը չունիս :»

Տղան վեր առաւ իր բարակ բազուկները և դուրս իր փոքրիկ բարեկամին պարանոցին վրայ , և ըսաւ , «Մի լար , Պետիկ , մի՛ ցաւիր : Ես քեզի քար պիտի նետէի երբ կառքը վրայէս անցաւ : Գո՛ւն ներէ ինծի : Այո , պէտք է որ դո՛ւն ներես ինծի , և ես քեզի կը ներեմ , և ան առես աղէկ կ'ըլլայ : Հոս գտնուողները աղօթք մը սորվեցուցին ինծի : Ի՛նչ էր այն , տիկին :» «Մեզի ներէ մեր մեղքերը ,» ըսաւ ճերմակներ հագած հիւանդապահը մեղմ ձայնով :

Հետեւեալ առաւօտ Պետիկ քիչ մը ուշացաւ : Քաղցրաբարոյ հիւանդապահը անոր դէմն ելաւ լուրջ դէմքով : «Օննիկ քիչ մը առաջ մեռաւ ,» ըսաւ : Եւ տղան տարաւ անկիւն մը ուր պառկած կը կենար անոր փոքրիկ բարեկամը : Պետիկ վայրկեան մը նայեցաւ մեռելին դէմքին վրայ , և մէկդի դարձաւ : Աչքերէն հեղեղի պէս արցունք կը վազէր :

«Բան մը չըսա՞ւ ինծի համար :»  
«Քու վրադ խօսեցաւ մեռնելէն ճիշդ առաջ , և հարցուց թէ հո՞ն էիր ,» պատասխանեց հիւանդապահը :

«Վստա՞հ ես թէ ներեց ինծի ,» ըսաւ տղան դողդոջուն ձայնով : «Վըստահ եմ :» «Ուրեմն կրնամ յուզարկաւորութեան երթալ :»

«Անշուշտ կրնաս » ըսաւ հիւանդապահը մեղմ կերպով : «Ետեղճ Օննիկը շատ բարեկամներ չունէր :»

Մղաւորը Պետիկ էր միայն , միայն անոր փոքրիկ սիրան էր յաւցողը , և միայն անոր արցունքներն էին որ կը թափէին Օննիկի հողքին վրայ : Բայց Պետիկ ինք ներած էր Օննիկի և անկէ ներուժ ընդունած էր անոր մեռնելէն առաջ : Եւ իրիցը հանդարտ էր , չունէր խայթ :

Եթէ տղիտութեան և մուլութեան մէջ զգայման այսպիսի աղնուութիւն կրնայ գտնուիլ , ի՛նչպէս կրնանք ար-

տուկ շինուած մուճակներով կը վազեն , մինչ Մուզը ձեան մէջէն ճամբայ բանալու կ'աշխատի , և դիւրին մը կը հասնին անոր : Վափիթին թէպէտ Մուզէն աւելի փոքր է , մեծ կենդանի մըն է , և կրնանք հաստատել թէ միսը շատ համեղ է , վասն զի ձմեռ մը , երբ կը գտնուէինք Միացեալ Նահանգաց ամենէն ցուրտ մասին մէջ , մեր տանուտէրը շատ անգամ մեզի կուտար անկէ :

ՀՊԱՐՏ ԳՈՐԾԸ

Դուանկայ դիշեր մըն էր , և շուրը այնպէս պայծառ էր որ կանաչ խոշոր գորտ մը զանկա հայելիի տեղ կը գործածէր : Կը կարծէր թէ ինք շատ գեղեցիկ էր : «Քէր չքք , քէր չքք ,» կ'ըսէր , «ի՛նչ գեղեցիկ խոշոր գորտ մըն



ՄՈՒՋ



ՎԱՓԻԹԻ

դարացնել մենք զմեզ եթէ մենք չունենանք : Պատուէրն Անոր՝ որուն նման երբեք մէկը խօսած չէ , շատ ազդու է . «Ներեցէք թէ որ մեկուն դէմ բան մը ունիք , որպէս զի ձեր Հայրն ալ որ երկինքն է՝ ներէ ձեզի ձեր յանցանքները :» Մարկ . ԺԱ . 25 :

ՄՈՒՋԸ ԵՒ ՎԱՓԻԹԻՆ

Խոշոր երկու տեսակ եղջերուներ կը գտնուին Հիւսիսային Ամերիկայի հիւսիսային մասին մէջ : Մուզը եղջերուի բնտանիքին մէջ ամենէն խոշորն է և ձիի չափ մեծ կ'ըլլայ , այնպէս որ երբեմն 400 քաշ կու գայ : Միայն եղջերուները երբեմն կու գան 25 քաշ : Գլուխը , ինչպէս կը տեսնէք , իշու գլուխի կը նմանի : Շատ արագ և կատաղաբար վազող կենդանի է և մարդու վրայ ալ կը յարձակի : Գարունին , երբ ձիւնին երեսը կակուղ կ'ըլլայ , շատ անգամ կը սպաննուի որտորդներէն , որոնք ձեան համար յա-

եմ ես , և երբեք չեմ այդ պղտիկ թռչունին պէս որ հոն մացառուտին վրայ կը նստի : Երբեք չեմ ուզեր այդպէս փոքր ըլլալ : Լսեցէք ի՛նչ տկար ձայն ունի , մինչ իմ ձայնս այնչափ ուժեղ է որ այդ հեռուոր ազարակէն կը լսուի : Ես անոնց երգ մը պիտի երգեմ հիմա : Քէր չքք , քէր չքք :»

Փոքրիկ թռչունը արթնցաւ ձայնէն , ճիւղի մը վրայ ցատկեց և սկսաւ երգել «Վայ , ա՛ն ալ կրնայ երգել ,» ըսաւ գորտը . «Իմ երես ինձմէ ալ քիչ մը աղէկ կ'երգէ : Բայց խեղճ բան մըն է ինք , շուրէն կը վախնայ : Ես մէյ մը շուրին տակը իջնամ :» ըսաւ և թաղուեցաւ ըճակին մէջ ու նորէն վեր եկաւ . բայց շուրին հանած ձայնը այնպէս կը վախցուց թռչունը որ վեր օդին մէջ թռաւ : Գորտը հիմա անոր ետեւէն նայեցաւ զարմանալով :

«Ես այդ բանը չեմ կրնար ընել ,» ըսաւ , «շուրին մէջ կրնամ սուզել , բայց օդին մէջ չեմ կրնար բարձրա-

նալ: Վերջապէս աղէկ բան չէ հպարտանալը: Վասն զի մէկը մէկ բան աւելի աղէկ կրնայ ընել, և ուրիշ մէկը՝ ուրիշ բան մը. և ոչ մէկը կարող է այն բոլոր բաներն ընել:”

ՊԵՆ ՆԻՎԻՍ ԼԵՌԱՆ ԴԻՏԱՐԱՆԸ

Սկովտիոյ հին լեզուին մէջ Պէն կը նշանակէ լեռ, և Պէն Նիվիս՝ Սկովտիոյ արևմտեան կողմը, ամենէն բարձր լեռն է Մեծին Բրիտանիոյ մէջ: Դժուար չէ այդ լեռն ելլել, վասն զի անոր գագաթին բարձրութիւնը, ծովէն չափուելով, մէկ մղոն չկայ: Բայց գրեթէ միշտ ծածկուած է մառախուղով, այնպէս որ շատ քիչ անգամ կրնայ տեսնուիլ անոր գագաթէն երևցող շքեղ տեսարանը:


Վերջին տարիներս շատ երկիրներու մէջ կայաններ հաստատուեցան յաճախ զննելու համար մթնոլորտին ճնշման փոփոխութիւնները. հովին ուղղութիւնը և արագութիւնը և ուրիշ մետեորաբանական իրողութիւններ՝ օդը գուշակելու համար: Այս դիտարանները պէտք էր որ բարձր և առանձին լեռներու գագաթներն ըլլային, և Պէն Նիվիսի գագաթը ամենէն յարմար տեղն է Մեծին Բրիտանիոյ մէջ, վասն զի ամենէն բարձր կէտն է, հեռի է մեծ քաղաքներէ, և Ստրանտեան Ովկիանոսէն փչող փոթորիկին ճամբուն վրայ կ'իջնայ: Այդ տեղ դիտարան մը հաստատելու վրայ առաջին անգամ խօսուեցաւ 1877ին: Մարդ մը 1884ի ամառուան ամիսներուն մէջ ամէն օր վեր կ'ելլէր զննութիւն կատարելու համար, և 1883ին շինուեցաւ դիտարանը: Թէ՛ ցերեկ թէ՛ գիշեր ամէն մէկ ժամն անգամ մը նոր զննութիւններ կը կատարուին, որ դիւրին գործ չէ միշտ, այն ձիւնին տարափներուն մէջ և սաստիկ հովին ժամանակը որ երբեմն ժամ մը մինչև 120 մղոն կը փչէ: Պատկերը կը ցուցնէ աշտարակը զննութիւն կատարելու գործիքներով մէկտեղ: Աշտարակը շատ հաստուն շինուած տան մը գագաթը կը գտնուի. այդ տան մէջ կը բնակին զննութիւններ կատարողները:

ԵՐԿՈՒ ԶՇՄԱՐԻՏ ՊԱՏԱՐԻՓԻՒՆՆԵՐ

Դեռահաս սիրուն աղջիկ մը աճապարանքով և շատ յուզուած մտադեղագործի մը խանութը և ըսաւ, «Անգութ աղաք կտորեր են խեղճ

կատուի ձագի մը կռնակը և մեր պարտեզը նետեր են զանիկա,» և անոր հեծութեան աղաղակներն այնչափ ցաւուցին սիրտս որ եկայ հասկընալու համար թէ պիտի մեռնի՞, և թէ չկայ՞ արդեօք զանիկա իր թշուառութենէն ազատելու դիւրին կերպ մը:”

Ըսուեցաւ իրեն թէ ամենէն աղէկ կերպը պիտի ըլլայ «Երբ գործածել անոր, և երբ թմրութեան մէջ կը գըտնուի, շուրթի մէջ խեղդել: Աղջիկը շորհակալ եղաւ, և արագ արագ տուն վազեց միայն վայրկեան մը կենայէ ետքը, քանի մը եռանդուն և յանդիմանական խօսքեր ըսելու համար տղայոց, այն կարծրասիրտ սրիկաներուն:



որոնք դեղագործին խանութն եկած էին իր ետեւէն, և ծիծաղներով և ծաղրներով պատասխանեցին աղջկան խօսքերուն:”

Այս պատմութեան իբրև հակապատկեր ուրիշ պատմութիւն մը Ընեմ ձեզի տղի մը վրայ զոր պիտի անուանենք Ֆրանք, վասն զի գիտեմ որ պիտի չուզէ որ իր անունը տպուած երևնայ: Անգամ մը այս տղան տեսնելով որ երկու աղաք քարերով կը ծեծէին շատ փոքրիկ կատուի ձագ մը, անոնց ձեռքէն ազատեց զանիկա, բռնի կամ համոզելով, չեմ գիտեր, և տուն բերաւ յաղթանակաւ:

Պման մը կաթ դրուեցաւ կատուին ձագին առջև, բայց տղան ցաւով տեսաւ որ նա այնչափ փոքր էր որ չէր կրնար կաթ ուտել: Տղուն մայրը խորհուրդ տուաւ որ զանիկա նորէն հոն տանի ուրիշ գտած էր, յուսալով թէ անոր խեղճուկ ձայներէն մայր կատուն կու

գայ անոր քով: Բայց տղան պարապ տեղը ժամու մը չափ սպասելէ ետքը նորէն առաւ զանիկա և տուն բերաւ:

Չէր գիտեր թէ արդեօք ինչ ընելու էր այդ փոքրիկ կենդանիին, վասն զի կերակրելու համար ըրած բոլոր ջանքերը պարապ ելան: Բայց իսկոյն փայլուն գաղափար մը եկաւ մտքը: Վազեց մտաւկայ դեղարանը, փոքրիկ խողովակ մը առաւ, այնպիսի խողովակ մը որ կը գործածուի փոքրիկ մանուկներու կաթ կերցնելու համար, և շիշ մը լեցուց կաթով, ներկայացուց այն սաստիկ անօթեցած ձագին: Կատուն ձագը կարծես հասկնալով բանը, ընդունեց զայն փափաքով, և շուտով գոհ վիճակ մը ունեցաւ, տաքնալով, կերակրուելով և հանգիստ ընելով:

Մնոր յատուկ փոքրիկ անկողին մը շինուեցաւ մառանին մէջ, ուր գիշերը կը պառկէր: «Բայց ես առտուն կանուխ ելելու եմ,» ըսաւ Ֆրանք, «առտունց շատ անօթի պիտի ըլլայ ձագը:”

Մայրը ժպտեցաւ, վասն զի Ֆրանք շատ կը սիրէր քնանալ առտուն գէմ: Եւ սակայն Ֆրանք առտուն ժամը վեցին (9 Ե.) վար իջաւ կատուի ձագին նախաճաշը տալու համար, և ցերեկն ալ երբեք չմոռցաւ զանիկա:

Բիշ ժամանակէն կենդանին սորվեցաւ ճաննալ Ֆրանքը, և երբ տեսնէր զանիկա, դուրս կը նետուէր իր սակառէն և կը վազէր զանիկա դիմաւորելու, վրան ելլելու, ոտքէն մինչև գլուխը, ցնծութեան և սիրոյ ամէն նշաններով: Երբ տղան կաթին շիշը կը ցուցնէր, կատուն ձագը կը ցատկէր շիշին քով, և քիչ ատենէն սորվեցաւ զանիկա երկու թաթերուն մէջ առնել և ծծել: Իրաւ որ շատ զուարճալի էր տեսնել կատուի ձագին կերակրուիլ:

Կէսօրէ մը ետքը Ֆրանք շիշը կաթով լեցուց և դրաւ ֆինքնիին (կատուի ձագին անունն է) հետ սակառի մը մէջ, և տարաւ զանիկա իր մեծ մօր տունը՝ անոր ցուցնելու համար: Երբ սակառը բացուեցաւ, ֆինքնին հոն էր, հոն էր նաև շիշը, բայց կաթը անհետացած էր: Լաւ մը խմած էր զանիկա իր փոքրիկ ճամբորդութեան միջոցին:

Երբ ընտանիքը ծովեզերքը գացին, կատուի ձագը ուրիշ մեծ մօր մը դրկուեցաւ որ գեղ մը կը նստէր: Եւ երբ

ամառը անցաւ, ոչ մէկը կը ճանչնար այն գեղեցիկ, աղէկ հոգացուած կատուն, որ ատենով ծեծուած ջախջախուած փոքրիկ ձագ մըն էր զոր քրանք ազատած էր չարչարողներուն ձեռքէն:

Հիմա, տղաք, լսեցիք այս երկու պատմութիւնները: Այս տղոցմէն ո՞րը աւելի իրական գոհունակութիւն զգացա՞յն որ անգլխութեամբ և մահուան աստիճան չարչարեց խեղճ փոքրիկ կենդանի մը, թէ այն՝ որ կենդանիի մը կեանքը ազատեց և երջանիկ ըրաւ զանիկա: Չեմ կարծեր որ ձեզի երկար ժամանակ պէտք ըլլայ հարցումիս պատասխանը տալու համար:

Չորաւոր և անվախ բնութիւն ունեցողը պէտք է մանաւանդ պաշտպանէ իր իշխանութեան ներքեւ գտնուող տկարը և անօգնականը: «Արդարը իր անասուններուն կենացը համար հոգ կը տանի» կ'ըսէ Սուրբ Գիրքը: Եւ բան մը այնքան չվշտացներ մեր մարդասէր Հայրը որքան անպէտ չարանքներ տալը խեղճ մունջ կենդանիներուն որոնք մեզի հետ բաժին ունին իր մեզի պարզ և անօգնական մէջ: Չանոնք մեզի յանձնած և վատահացած է որպէս զի մեր անոնցինէն աւելի բարձր իմացականութիւնը գործածենք անոնց օգուտին և ոչ թէ վնասին համար: Եւ եթէ ճանդուկ մը անգամ գետինը չիյնար առանց մեր էրկնաւոր Հօր հրամանին, սուկալու ենք անոր արդար բարկութենէն երբ անհաւատարիմ կ'ըլլանք իր մեր վրայ դրած վատահոլութիւնը չարաչար գործածելով:

**ՄԵՋԻՆՆՈՎ ՎԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԻՆ**

Մեծութեան նայելով ամենէն զօրաւոր բաներէն մէկն է միջիւնին ծրնոտներուն սեղմելու ոյժը: Հաւանօրէն չկայ աշխարհիս մէջ մեքենայ մը որ այնքան ոյժ ունենէ իր մեծութեան և ծանրութեան նայելով: Պրագիլիոյ մէջ միջիւնները շատ խոշոր են և զօրաւոր: Հնդկաց մէկ ցեղը մասնաւոր օգուտ մը կը քաղէ այս իրողութենէն, նաև սա իրողութենէն որ մինչև անգամ միջիւնին գլուխը կարուելէն և մարմնէն բաժնուելէն ետքը ծնօտներուն սեղմումը չթուլնար:

Երբ Հնդիկ մը կը վիրաւորուի ձեռքէն կամ մարմնին ու և մէկ կողմէն ուր վէրքը կրնայ կարուիլ, փոխանակ աւելի կարելու, ինչպէս կ'ընեն մեր վիրաբոյժները, Հնդիկ տղքերը հինգ վեց խոշոր միջիւն բերել կու տայ: Ա-

նոնց գլուխները վէրքին բերնին մօտ կը տանի, միջիւնները կը գոցեն իրենց ծնօտները, կը խածնեն մտքը մինչև միսը և վէրքին երկու շրթունքները իրար կը բերեն ամուր մը սեղմելով: Ետոյ Հնդիկ տղքերը կը կարէ կը բաժնէ միջիւններուն գլուխները, և մէկ կողմ կ'առնէ մարմնները: Այսպէս վէրքը աւելի կատարեալ կերպով կը գոցուի քան կարուելով:

**ՕՐԱՊԱՐԻԿ ԲՈՒՍԻՈՅ ՄԷՋ**

Ռուսիոյ Աշխարհագրական Ընկերութիւնը կը ջանայ հիւսիսային Ռուսիոյ և Միպերիոյ բնակիչներուն յստակ գաղափար մը տալ օգապարիկի վրայ, և գալ ամառ հաս մը պիտի ցուցնէ անոնց: Հիմա բոլոր այս հիւսիսային ժողովուրդներուն մէջ կը ցրուուի թուղթ մը որուն վրայ օգապարիկի երկու պատկերներ կան. մին կը ներկայացնէ օգապարիկը օգին մէջ բարձրացած և միւսը գետնին վրայ իջած, որուն քով կը վագեն մարդիկ ամէն կողմէ: Յիշեալ թուղթին վրայ գրուած է Տր. Անտրէի օգապարիկով ճամբորդութեան պատմութիւնը շատ պարզ լեզուաւ:

«Երեք մարդիկ, որոնք շատ բան գիտէն» կ'ըսէ թուղթը, «ամպերը պիտի ելլեն գալ ամառ քիչ մը աւելի գիտութիւն ստանալու համար: Պիտի նստին կողովի մը մէջ որ կցուած պիտի ըլլայ տեսակ մը ուռեցնող կազով լեցուած մեծ խոշոր փուքի մը: Օգապարիկ է այս: Երբ օգին մէջ կը բարձրանայ, Ա թիւ պատկերին պէս կ'երևնայ: Օգապարիկը մէկուն չվնասեր, նայէ 2 թիւ պատկերին և տես որ ժողովուրդը անոր կը վագեն երբ վար կ'իջնէ գետինը: Անոնք պիտի չվագէին անոր քով եթէ սոսկալի բան մը ըլլար. ուրեմն մէկը պէտք չէ սարսափի երբ օգապարիկը տեսնէ:

«Ոչ ալ պէտք է մէկը սոսկալ օգապարիկին մէջ գտնուող երեք մարդոցմէն: Անոնք բարի մարդիկ են, և ամէնքդ պէտք է օգնէք անոնց: Աստուծոյ և Չարին հաճելի կ'ըլլայ եթէ այս երեք մարդիկները տեսնողները մարդասիրութիւն ցուցնեն անոնց, կերակրեն զանոնք և առաջնորդեն ամենէն մօտ գտնուող կառավարական պաշտօնատունը, և Եռէտի թագաւորը պիտի վարձատրէ այդ բարի գործը»:

Հետաքրքրական է գիտնալ թէ ուեմէկը Չարին հպատակներէն, որոնց այսպիսի տղայական լեզուով խօսիլ պէտք է որպէս զի հասկնալու կարող ըլլան, պիտի կրնայ արդեօք կարդալ թուղթին մէջի գրուածը:

**ԴՊՐՈՅԻ ՏՂՈՑ ԶԵՌՔՈՎ ՏԵՂԱՓՈԽՈՒՄԸ ՏՈՒՆ ՄԸ**

Մտածեցէք թէ ի՞նչ հետաքրքրական և գեղեցիկ բան է եօթը հազար Մինիսիպիոյի դպրոցական տղոց տուն մը անգլափոխելը: Կ'ըսուի թէ այդ տունը առաջին անգամ շինուեցաւ Միսիսիպիի գետին արևմտեան կողմը ուր Մինիսիպիոյ մեծ քաղաքը կը կենայ հիմա: Այդ տունը շինեց զնդապետ Սթիվընս 1848 ին, և անոր մէջ ծնաւ Մինիսիպիոյի առաջին ճերմակ մանուկը, փոքրիկ աղջիկ մը Մէրի Էլիզապէթ անուն. տեղոյն մէջ առաջին կրօնական պաշտամունքը հոն կատարուեցաւ, և առաջին եկեղեցին հոն կազմուեցաւ:

Շատ չանցած այն տեղը, ուր տունը կը կենար, պէտք եղաւ վաճառանոցի համար, ուստի տունը ուրիշ կողմ փոխադրուեցաւ: Միևնոյն բանը պատահեցաւ անոր քանի մը անգամ, մինչև որ վերջապէս առատաձեռն անձ մը զնեց զանիկա և նուիրեց տեղոյն կառավարութեան, պայմանաւ որ տունը հանրային պարտէզը փոխադրուի: Ուրախութեամբ ընդունուեցաւ առաջարկութիւնը, և մէկը խորհուրդ տուաւ դպրոցի տղաքը հրաւիրել տեղափոխութեան գործը կատարելու:

Երբ առաջարկութիւնը հաղորդուեցաւ դպրոցներուն, եօթը հազարէ աւելի աշակերտներ մեծ փառաքով պատրաստուեցան գործին համար: Չորրորդ աստիճանէ վար եղող ուսանողները չընդունուեցան, հաւանօրէն այն պատճառաւ որ խորհուրդը թէ անոնք բաւական զօրաւոր չէին: Ուսանողները հազար հոգի բաղկացեալ խումբերու բաժնուեցան, և իւրաքանչիւր խումբ իր յատուկ նշան ունէր:

Տունը ծանր անիւներու վրայ հանուեցաւ, և ժամը 9 ին հազար տղաք բռնեցին չուաններէն և քայեցին տունը հեռուորութեան մէկ եօթներորդ մասը, յետոյ ուրիշ հազար տղաք քայեցին իրենց բաժինը, և այսպէս ուրիշներն ալ, մինչև որ ամէն ալ մասնակից եղան քայելու գործին, և կէսօրէն ետքը ժամը երկու քիչ ատենները տունը իր ճամբուն մայրը հասաւ: Այնուհետև բանախօսութիւններ և ընդհանուր զուարճութիւններ տեղի ունեցան:

Քաղաքը այդ օրը տօնախմբութեան օր ըրաւ, և քաղաքին մէջ ձրի կառք նստելու է պարտաւորութիւնը կարծեմ թէ այս օրը տօնախմբութիւնը անգամ որ քաղաքը տեղափոխուած է:



Ամերիկայի Միսիսիպիոյի Տղայացի Միութեան Կառուցման Կարձեմ Թէ այս օրը տօնախմբութիւնը անգամ որ քաղաքը տեղափոխուած է:

**ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ**  
Ի ՏՅՈՒՆԻ Ա. ՅԱՊՐ ԳՕՍԱԶԱՆ